# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՔՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

« 25 » ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012Թ. N 68

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ*
*ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ*

*ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 14-ի թիվ-1 նիստի N4-6-Ն որոշումները Միաժամանակ հայտնվում է որ նշված որոշումները սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 59 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

11858-12
26. 12. 2012

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

«24 » Նոյեմբեր 2011թ. թիվ 4 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ԱՐԱՔՍ գյուղական համայնքի վարչական տարածքում 2013 թվականի համար աշխատողների թվաքանակը և դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Հ. Աբրահամյան
Ա. Աբրահամյան
Տ.Հարությունյան
Հ. Ավագյան
Ծ. Տոնոյան
Ս. Նազարյան
Ս. Քարսեղյան
Ռ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2011 թվականի նոյեմբերի 24

Հավելված 1
Արաքս /Արմ./ համայնքի ավագանու
2012թ. Նոյեմբերի 14-ի թիվ 1նիստի 4Ն որոշման

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ /ԱՐՄ. / ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ. ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ/ՀՀ դրամ/ | |
|---|---|---|---|---|
| | 2012թ | 2013թ | 2012թ | 2013թ |
| Համայնքի ղեկավար | 1 | 1 | 130.000դրամ | 154000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 1 | 84.000դրամ | 102000 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 1 | 82.000դրամ | 99000 |
| **ԱՇԽԱՏԱԿԱԶՄ** | | | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 1 | 82.000դրամ | 99000 |
| Գլխավոր մասնագետ 2.3-1 | 1 | 1 | 80.000դրամ | 97000 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 2 | 2 | 75.000դրամ | 91000 |
| Առաջին կարգի մասնագետ 3.2-1 | 1 | 1 | 70.000դրամ | 86000 |
| **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | | | | |
| Հավաքարար | 1 | 1 | 40000դրամ | 51000 |
| Մեքենավարող | 1 | 1 | 50000դրամ | 63000 |
| Էլեկտրիկ-հասստավար | -- | 1 | --- | 60000 |
| պահակ | ---- | 1 | ------------ | 50000 |
| | | | | |

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«24 » Նոյեմբեր 2011թ. թիվ 5 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ԱՐԱՔՍ գյուղական համայնքի վարչական տարածքում 2013 թվականի համար պետական տուրքերի դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Հ. Աբրահամյան
Ա. Աբրահամյան
Տ.Հարությունյան
Հ. Ավագյան
Ֆ. Տոնոյան
Ս. Նազարյան
Ս. Բարսեղյան

ՀԱՄԱՅՆՔԻ Ղ[illegible]
2011 թվականի [illegible] 24

Ռ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
20[illegible] ԹՎԱԿԱՆԻ նոյեմբեր 24
N [illegible] ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար՝
*1)* մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երկու հազար դրամ.
*2)* սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
*ա.* 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար դրամ.
*բ.* 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ.
*գ.* 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յոթ հազար դրամ.
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
*3)* մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հարյուր դրամ.
*4)* 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
*1)* չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.
*2)* բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի **1-ին** ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝

օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

*3)* նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

*1)* ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ.

*2)* ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

*1)* բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

*1)* առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

*2)* հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

*5)* շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

*1)* ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

*2)* թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հինգ հարյուր դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հինգ հարյուր դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

12. Համայնքի սեփականության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել հինգ հազար դրամ:

Ռ. Պողոսյան

Հավելված N 1

Օրինակելի ձև

__ԱՐՄԱՎԻՐԻ__________________ ՄԱՐԶԻ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ)

(մարզի անվանումը)

__ԱՐԱՔՍ _ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

# 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է _ԱՐԱՔՍ ________________ համայնքի

(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

Ավագանու 14.11 20 12 _ թվականի___1_ -ի N 6 որոշմամբ

(ամիս ամսաթիվ)

__________ԱՐՄԱՎԻՐ__________________

(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ռ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

(Անուն, հայրանուն, ազգանուն)